

արկաներն, կը յաւելու Պ. Շլիման. և այս անտի յայտ է որ այն շփոթութեան մէջ չի կրցանք ընտրութիւն ընել գլխաւոր առարկայից. անանկ որ գտայ վերջէն գլխու երկու մեծագործ զարդեր յոսկւոյ, թագ մը և չորս գեղեցիկ ոսկեայ օղեր մեծարուեստ ճարտարութեամբ յօրինեալ: Բաց ասոնցմէ գտայ դարձեալ 56 գեղեցկաձև օղ, շատ մը պղտի մատանիներ ու կոճակներ »:

Այս ամեն բաներն մի առ մի թուելէն ետքը, կը սկսի Պ. Շլիման գեղեցիկ նկարագրութիւն մ'ընել վերոյիշեալ առարկայից. և մասնաւորապէս կը ճոխանայ թագին, ապարանջաններուն և օղերուն վրայ, ցուցընելով անոնց արուեստական յարգն և առաւել քան զամենայն անոնց պատմական անկշռել աժէքն:

Վերջ տալու ատեն իր հետաքրքրական գրութեանը, կը յիշատակէ անդ Պ. Շլիման և իր մէկ գրուածքն որ կը տպագրի արդ՝ ի Լիբանա, Տրոյիոյ պեղմանց վրայ. որուն մէջ բաց ՚ի նոյն կողմանց աշխարհացոյց մէկ տախտակէն պիտի ըլլան դարձեալ 246 լուսանկար տախտակը, ներկայացնելով իր գտած գանձուն գլխաւոր առարկաները:

Պ. Շլիմանի գտած այս հնութեան ամեն առարկաներն Աթէնք փոխադրուեցան. և կը կարծուէր յառաջագոյն որ ասոնք Պրիամու գանձն ըլլան. բայց Պ. Ռոսբուլոս, ուսուցիչ բանասիրական ուսմանց և հնախօսութեան, որ կատարեց իր ուսման ընթացքն կողդինկայի Համալսարանին մէջ և կը գըտնուի այժմ՝ ՚ի Հաննովէր, յայտնեց իր կարծիքն, որ Պ. Շլիմանի մօտերս գտած հնութիւններն և ոչ փոքր յարաբերութիւն մ'ունին հնոյն Պրիամոսի գանձուն հետ, թէպէտ մեծ յարգ ու կշիռ ունին և կը զերազանցեն քան զվերջին ժամանակներս եղած ամեն գիւտերն: Պրիամու գանձուն չի վերաբերելուն գլխաւոր պատճառն այն է որ այս հաւաքածուին զանազան մասերն յատկացնող զարդերն կը պակասին: Եւանդուր կը կարծէ Պ. Շլիման բուի մը

պատկերն տեսնել, ուրիշ բան չէ բայց եթէ երեք կէտ զօրս կը համարի նա կենդանւոյն երկու աշքերն ու կտուցն:

Ըստ կարծեաց Պ. Ռոսբուլեայ պէտք է որոշել տակաւին թուականն որուն կը վերաբերին այս ամեն առարկաներն. միայն ոսկւոյն աժէքն զրեթէ 400,000 ֆրանքի կը հասնի: Կը յաւելու Պ. Ռոսբուլոս որ Պ. Շլիման միտք ունի այս գանձն Աթենքի Համալսարանին շնորհել, թէ որ յունական պետութիւնն թոյլտայիրեն հետազօտութիւններ ընել հնոյն Միկենայ աւերակաց մէջ:

=====

Եւրոպական ցեղք. — Աշխարհիս մէջ բազմաթիւ և ամենէն աւելի տիրողն լատին ցեղն է, ըստ այսմ վիճակագրութեան.

Լատին ցեղ. — 36,000,000 Գաղղիացիք, 26,000,000 Իտալացիք, 2,200,000 Պելճիացիք, 800,000 Զուխերացիք, 4,500,000 Բորդուգալցիք, 8,000,000 Ռումենիացիք, 1,000,000 Քանատա — Գաղղիացիք, 11,000,000 Պրէզիլիացիք, 32,000,000 Սպանիա — Ամերիկացիք.

Բոլորին գումարն 439,000,000:

Ալատիան ցեղ. — 80,000,000 Ռուսը և 25,000,000 Ալատիք՝ ՚ի Բրուսիա, յԱւստրիա և ՚ի Թուրքիա.

Բոլորին գումարն 405,000,000:

Անգլիական կամ կելտա — գերմանական ցեղ: — 31,000,000 Անգլիացիք, Սկովտացիք ու Իռլանտացիք, 44,000,000 Հիւսիսային Ամերիկացիք, 2,500,000 Քանատա — Անգլիացիք, 5,000,000 Աւստրալիացիք, և 1,000,000 զանազան տեղ ցրուած նոյնացեղ ժողովուրդք.

Բոլորին գումարն 78,500,000:

Գերմանական կամ սքանչելեան ցեղ. — 40,000,000 Գերմանացիք, 9,000,000 Աւստրիա — գերմանացիք, 6,000,000 Հոլանտացիք և Ֆիամմինկը, 1,800,000 Զուխերացիք, 8,000,000 Աքանտինաւր.

Բոլորին գումարն 64,800,000:

Նոր չըսբուղլու և Զիլ. — Ներկայ տարւոյս Բեղերմանի Աշխարհագրական տեղեկութեանց առաջին թերթին մէջ ընթերցաք 1872 ամին յունիս և յուլիս ամսոց մէջ՝ ՚ի Զիլի պատահած նոր հրաբըլիսի մը համառուտ ստորագրութիւնը:

Այս հրաբուղիսը զոր կոչեցին Լոճէլ, տե-

զի ունեցաւ յԱրաւգոնիա՝ Վիլլարիքա հրաբուխին մօտ : Բաժակէն ահագին քանակով աւազ գուրս ժայթքեց, ձգելով 3 և 4 մղոն հեռաւորութեամբ դէպ 'ի հիւսիս :

Այս աւազը որ բաղկացեալ էր հրաբրդիսային ապակւոյ թափանցիկ մասունքներէ, անկիւնաձեւ ու կանաչանման էր : Պ. Ֆիլիքրի 'ի Սանդիակոյէ, կը պատմէ որ գրեթէ ամբողջ 14 օր ուժգին հով մը՝ մղեց 'ի հարաւոյ 'ի հիւսիս մինչև 'ի Սանդիակոյ՝ առջինէն աւելի մեծ աւազոյ քանակ մը մթնագոյն : Լաւան հեղեղօրէն տարածեցաւ շրջակայ կողմանց վերայ մեծամեծ զոհեր ընելով, և արգիլեց Փերէ գետին ընթացքն, որ ստիպուեցաւ լայնածաւալ լճակ մը ձեւացնելու :

Մասնաւոր մտադրութեան արժանի է որ սյս նոր հրաբուղիսը անցեալ տարւոյն Վեսուվի համբաւաւոր բորբոքմանէն քանի մը օր ետքը բացուեցաւ, մինչդեռ առաջ ամեննեխն անծանօթ էր :

Չտե՛ր ՄԸ Ի ՆՈՐ-ԶԵՄԼԵԱ . — Խնդիր էր 'ի մէջ ուղելորաց և հետայուղից թէ արդեօք կարելի՞ է ձմերել 'ի Նոր-Զեմլեա . բայց լուծուեցաւ խնդիրն 'ի մեծ օգուտ գիտութեան, որ պիտի կարենայ ձմեռնային եղանակի մէջ ալ շարունակել իր հետազոտութիւններն և քննութիւնները :

Իակ խնդիրը լուծողն ելաւ Պ. Սուհլ (Suhl), որ օրինակաւ իւրով հաստատեց թէ 'Նոր-Զեմլեայի ձմեռնային կլիմայն ամեննեխն չի վեասեր մարդկային առողջութեան : Այս եռանդուն ուղելորն կազմեց իր առանձին զրամովի ութ անձանց որսորդաց արշաւանք մը, որոնք փորձ էին ամեն տեսակ աշխատանաց և վարժք սաստկութեան կլիմայից : Առին հետերնին 24 լիպրէ թէյ, նոյնչափ քանակ շաքար, տակառ մ'օղի, տակառ մ'ալքօօլ, ուրիշ պիտոյից նիւթեր և դեղեր : Բոլոր այս անձինքը ամբողջ ձմեռը նոյն կղզին անցուցին, և գարնան դարձան Արխանկէլ ողջ և առողջ : Մէջերնէն մէկը միայն մեռած էր, պատանի մը ութեատանամեայ, այլ ոչ կլիմային սաստկութենէն : Ասիկա փայտ ժողովելու համար դուրս ելած ըլլալով, գիշերը չի դառնար, և ընկերքը կը գտնան զինքը գետնոյ վրայ յորսայս անկեալ՝ ժողոված փայտակուտին մօտ, իրենց սովորական ընակութեան տնակէն քիչ հեռու : Դուրս ելած ժամանակ ողջ և առողջ և լաւ պատսպարուած էր, ուստի հաւանաբար կարծուեցաւ թէ կաթուածահար եղած ըլլայ :

Կերակրոյ ամեննեխն նեղութիւն չէին ունեցած, որսալով 150 սրավար եղջերու :

Ընդհակառակն պակասեցաւ իրենց հանդերձ ամենայն չափաւորութեամբ օղի և ալքօօլ : Իրենց որսորդութեան արդիւնքն եղաւ սրավար եղջերուաց մորթն, 10 տակառաչափ ճարագ, սպիտակ արջու մորթ, և ուրիշ մէկ քանի ծովային կենդանիներ :

Որսորդք եթէ այս արշաւանքն կրկնելու համար պայման ուզենան դնել, այն պիտի ըլլայ պայմանն որ ընտանեօք երթան :

ՃԱՆՍՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՄՈՆԿՈԼԻԱ . — Պ. Նէ Ելիաս (Ney Elias) վերագարձաւ 'ի Լուտուա, յետ 'ի գլուխ տանելոց իր հետաքրնին ուղելորութիւնն Արնկոլիոյ զվաւոր կողմերը, որ տեսեց 1872 տարւոյն յուլիս ամսէն մինչև 1873 տարւոյն յունուար ամիսը : Մեծանուն ուղելորն Փէրինի սովորական ճամբան չամբան չի բռնեց, այլ խոտորեցաւ յարեւմուտս կոյս, ընդ մէջ կտրելով յարեւլից յարեւմուտս չինական թաթարստան անուանեալ երկրին հիւսիսակողմբ : Լէնկթիմուրի հոչակաւոր մայրաքաղաքին՝ Քարաքորումի մօտերէն անցաւ, վասն զի հաւանական կարծեօք կը համարուի թէ այն կողմերն եղած ըլլայ . բայց ամեննեխն չի տեսաւ անոր աւերակացը հետքը, և ոչ ո և էնչան այն կործանեալ յիշատակաց քաղաքին : Շարունակելով իր ճամբան հետաքրրական դիտողութեամբք, հասաւ վերջապէս 'ի Սիպերիա :

Այս ականաւոր ճանապարհորդին տուած տեղեկութիւններն թէպէտ գեղեցիկ ու հետաքրրական են, բայց ոչ այնքան ճոշիս, յուղեալ ըլլալով այն երկիրնուր պարտեցաւ, չինական Քանա - սու գաւառին մահմետականաց կրօնական խոռվութեամբն, որ հասած էր և 'ի Արնկոլիա, և կը սփռէր ամենուրեք ահ, մահ և կոտորած :

Իր ճանապարհորդութեան արդեանց տեղեկութիւններն կարդացուեցաւ տարւոյս մայիսի 12ին գումարուած Լոնտուայի աշխարհագրական ընկերութեան ժողովոյն մէջ . և կը պարունակէր կարեւոր տեղեկութիւններ նոյն երկրին լայնութեան, երկայնութեան, մագնիսական փոփոխութեան և ծովուն մակերեւութէն ունեցած բարձրութեան վրայ . որոնք կրնան մեծապէս օգտակար ըլլալ աշխարհագրական դիտութեան :

Եւ այն ժողովրին մէջ ցուցուեցաւ թէ ինչպիսի մեծ յարգ ունի այսպիսի արագ արշաւանք մը այնպիսի երկիր՝ զոր ոչ ոք Եւրոպացի տեսեր էր յետ Արգոյ Բոլոյի . վասն որոյ և ընկերութիւնն չի զլացաւ իրեն անդամ այսպիսի ճարագիկ ուղելորի մը ոսկեայ միտալ ընծայելու :

ՖՈՐՄՈՁԱ ԿՂՋԻՆ . — ԼՈՆՏՈՒԱՅԻ ԱՉԽԱՐ-ՀԱՊՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՁԻՆ ԳՈՒՄԱՐ-ՄԱՆԳ ՄԻՌՅՆ ՄԷջ Կարդացուեցաւ ՖՈՐՄՈՂԱ ԿՂՋԵՈՅՆ ՆԵՐՔՍԱԿՈՂՄԱՆ ՄԷկ ՆԿԱՐԱԳՐՈՒ-ԹԻՆԸ, ուր ճանապարհորդեցին վերջերս Պ . ԹՈՄԲՍՈՆ (Tompson) և Պ . ՄԱՎԵԼ (Mawel). և միջամուխ եղին մինչև 'ի մեծ շըլ-թայս լերանցն որք հատանեն զկղզին 'ի հիւսիսոյ 'ի հարաւ : Պ . ԹՈՄԲՍՈՆ ցամաք ելաւ կղջւոյն հարաւային արևմտեան կողմը, և անտի յառաջեց մինչև թայնվանֆու, որ ծովեղերեայ քաղաք մ'է 70,000 բնակչօք : Հոնկէց ալ մեկնեցաւ երկրին ներք-սակողմը նորանոր քննութեանց և հետա-զօտութեանց համար :

Կղջւոյն արևմտեան կողմը՝ բնակեալ 'ի չինական գաղթականութեանց, շատ լաւ մշակուած է մինչև չափ մը հեռաւորու-թեամբ յափանց ծովու, և կալուածներով ու գեղերով զարդարուած : Յառաջելով դէպ 'ի խորերը, լերինք կը պատեն զերկի-րը, որուն կենդրոնական մասը, ինչպէս նաև բոլոր արևելեան եղերքը գրաւած են վայրենի բնակիչք տեղւոյն, որոց ծագումը 'ի Մալացւոց է : Կենդրոնական լեռները անտառախիտ են, որոց գագաթունքը կար-ծես իրարու վերայ հեծած են : Թոմբսոնի տեսած լերանց մէջ ամենէն բարձրն Մոր-րիզոն լեռն է, որ 11,000 ոտնաչափ 'ի վեր բարձրանայ քան զմակերևոյթն ծովու :

Հեղեղաց բոնութիւնն խորունկ փոսեր բացած են սեպացեալ քառաժայոից վե-րայ : Ավունքներն ծածկուած են արեա-դարձային երկրի տունկերով, և կ'ընծայեն այցելուաց մեծութեան և գեղեցկութեան հիանալի տեսարան մը :

Այս երկու ճանապարհորդքն հասան Բա-ահ-լիան անուն գեղ մը, որոյ բնակ-չաց խօսած լեզուն մեծ նմանութիւն ունի Արնկաբուրի Մալացւոց լեզուին հետ : Վայ-րենիներն կորովի, մարմնեղ, միանգամայն և աւազակաբարոյ են : Ճանապարհորդքն հեղեղի մը ցամաքեալ յատակին վրայ հող-ածխոյ հետքեր տեսան, որ կը ցուցընեն թէ ինչպէս տարածուած է կղջւոյն ամեն կողմը այս այրելի մարմնը, որ հիմա այն աշխարհաց տուրեառիկ վաճառականու-թեան շահաւոր ու զլսաւոր նիւթն է :

ԱՌԵԱԼԻՆ ԿՂՋԻՆ . — Ախսալին կղջին կը բարձրանայ Ամուր գետին բերանը, զոր ընդ մէջ հատանեն շղթայք լերանց անտա-ռասխիտ գագաթամբք : Ունի կղջին այլ և սյլ գետեր և մէկ քանի լիճեր : Արեւելա-կողմը պղտի բլրակներ ամբառնան, որոց վերայ մարդաչափ բարձրութեամբ տեսակ

մը խոտ կը բուսնի : Իսկ հարաւակողմը կղջին յերկուս թերակղզիս կը բաժնուի :

Ծառոց աճումը հիանալի է, կլիմայն բա-րեխառն ամեն եղանակի մէջ, անանկ որ կղջւոյն արևելեան ծոցը ամենենին չի սա-ռիր : Նոյեմբերի մէջ կը սկսի ձիւնել, իսկ մայիս ամսոյն մէջ բոլոր ծառերն աերեա-զարդ պերճացեալ են :

Կայ կղջւոյն մէջ կենդանեաց մասին՝ արջ, աղուէս, սամոյր և ջրշուն . որոց մորթն շատ յարգի բլալուն, կը փոխանա-կեն մասնաւորապէս ձարսնաց հետ . իսկ ափանցը վերայ կայ բազմութեամբ ծովա-հորթ, պալենայ, և առաւել քան զամե-նայն աղկեր ձուկն : Միայն այս ծոցին մէջ յորում ձարսնք ձկնորսութիւն կ'ընեն, և էն աւելի ձկնարան չինած են բռնած ձուկերն չորցընելու համար :

Իսկ հանկրաց նկատմամբ բաւական է նշանակել միայն երկրին ածխարեր խա-ւերն, զորս 'ի լոյս հանեց Օրլով երկրա-բանն . որք շատ ընտիր են, մինչև կարենալ մրցիլ անգղիականաց հետ :

Կղջւոյն մէջ կան երեք ցեղ մարդկան, որոնք ընդհանրապէս լերանց վրայ կը բնա-կին և ձկնորսութեամբ ու որսորդութեամբ կ'ապրին, և մէկմէկէ աւելի կամ նուազ խժարարոյ են :

Կղջւոյն հարաւակողմը 52 գեղ կը համ-րուի աւելի քան 2500 բնակչօք . ուր կա-նաքը իբրև ոչինչ համարուած են, բազմա-կնութիւնն իբրև օրէնք զօրացած բլալով երկրին մէջ . այս կողմերս կը տիրէ աչաց ու շրթանց տեսակ մը հիւանդութիւն :

Տեղաբնակըն ձուկէն զատ ուրիշ բան չեն ուտեր, որք թարմք են ապրիլէն մինչև ցնոյեմբեր ամիս, և աղեալ՝ տարւոյն բո-լոր միւս ամսոց մէջ : Բրինձէ տեսակ մ'ըմ-պելիք ունին, զոր բերել կու տան 'ի ձա-բոնէ, և կը համարին զայն իբրև անդեղայ ընդդէմ ամենայն հիւանդութեանց : Ճար-պիկ ու յանդուգն նաւորդք են, բայց չեն կրնար յառաջել յափանց աւելի քան զհինգ մղոն, նաւերնին շատ տկար բլալուն : Զմե-ռը բալիսիր կը գործածեն լծեալ 'ի շանց :

Կրակապաշտք են իբրև զՊարսս, և սլաշ-տօնատարք լուսնի . չունին կուռք, բայց երկրապեկն կաղնուոյ, և սնոտիապաշտք առաւել քան զչափ : Հիւրընկալը են առաւ-ել քան որչափ կարծեմք, և ունին սովո-րութիւն ծխելոյ, և ծխախոտն բերել կու տան 'ի ձաբոնէ :

Բոլոր կղջւոյն օտար երկիր զրկուելու բերքերն կը ժողովին 'ի Ախրակուղիէ, քա-ղաք յարեւմտակողմն կոյս, ուր կու քան յունիս և յուլիս ամսոց մէջ Ամուրի, Ման-

շուրիոյ և ձարոնի վաճառականներն ու կը տանին:

Ուստիոյ տէրութիւնն մօտ ատեններս պաշտօնալէս տիրեց բոլորովին այս կըղդոյն, համարելով թէ Հիւսիսային Ամերիկացիք միտք ունին առ այն: Երկու բերդ կառոյց կղզւոյն երկու ծայրերը, և մտուց անդ ցորեան և ուրիշ կենաց պիտոյից նիւթեր. և մասնաւոր աշխարհագէտ մարդիկ խաւրեց որպէս զի կղզւոյն աշխարհագրական ձեն առնուն:

Ա. ՍՈՐԵԱՆ ԿԴՅԻՔ. — Ասորեան կղզիք որ ինն են թուով, կը բարձրանան 'ի մէջ Ռվկիանու, և գրեթէ հաւասար հեռաւորութիւն ունին յԵւրոպիոյ, յԱմերիկոյ և յԱմերիկոյ: Հին ատեն ծանօթ էին այս կղզիներն Կարքեղոնացւոց. բայց յետ բազում գարուց կոնսալվոս Վելոյ գարձեալ ծանօթացուց յամին 1432 և անուանեց Ասոր (Asore), հօն եղած բազէից բազմութեանը համար, վասն զի լուսիտացիք ասոր կ'անուանեն այդ թոչունը: — Այս կղզեաց կլիմայն բարեխառն է, և ձմեռ ատեն միայն կը նստի ձիւն լերանց գագաթը. կը պըտղաբերէ երկիրը ցորեան, աղնիւ գինի և առատ պտուղ. ծովն ալ կուտայ ոստրէ, և բազում աղդ ձկանց:

Սան-Միկէլ, որ Ասորեաց մէջ ամենէն հարուստն, վաճառաշահն և հետեաբար գլխաւոր կղզին է, նարնջի մեծ առուտուր ունի ընդ. Անդզիոյ, անանկ որ տարին գրեթէ 240,000 արկդ նարինջ կը խաւրէ, իւրաքանչիւր արկդն 7 կամ 800 նարինջ բովանդակելով: — Բայց ասկէց կը խաւրէ գարձեալ ամեն տարի 130 կամ 140,000 հարիւրալիտր ցորեան. ուստի վաճառականական աշխարհին մէջ ըստ բաւականի կարեւոր կէտերէն մէկն եղած է: Բոնդա Տելկատա՝ որ կղզւոյս վաճառականութեան կենդրոն գլխաւորքաղաքն է, 15,000 բնակիչ միայն ունի. որուն մօտերն կ'իյնան Ֆուրնաս անուն հովտին հոչակաւոր ջերմաղբիւրներն:

Միւս Ասորեան կղզիներն են Ֆայալ, յորում կայ ամուր բերդ, նաւահանգիստ շահաստան, վանորայ, և հոյակապ եկեղեցիք: Ետքը կուգայ Բիքոյ կղզին, յորում կայ գրեթէ 800 ոտք բարձրութեամբ հրաբրդիսային կոնածելեռ մը, որ հիմա շիջեալ է: Իակ միւս կղզեաց անուններն են Դէրչէյրա, Գուէրվոյ, Ֆլորէս, Կրաչիոլա, Ա. Գէորգ:

ԲԱՐԱԿՈՒԱՅ. — Բարակուայի բնակիչն է 251,196 հոգի, որոց 176,000 բնիկ Բարակուացիք են, և 35,196 օտարականք: Ասունցիոն կամ Վերափոխումն, որ իշխանանիստ մայրաքաղաքն է, ունի 17,890 բնակիչ: Տեսնելով այս սակաւամարդ բնակչաց թիւն, անհաւատալի թուի մեզ որ Բարակուայի բնակիչը յառաջ քան զվերջին պատերազմունս՝ 1,400,000 եղած ըլլայ, վասն զի պատերազմը որչափ ալ երկարատե ու արիւնահեղ ալ եղած ըլլայ, անկարելի է որ երկիրն այնչափ մարդ կորսնցունէր:

332 ՏԱՐԻՈԹՆ ԸՄԲԱՏԱՐԵԸ. — Վերջերս գտնուեցաւ կալուայի մէջ այն անօթը որ 'ի վարձ տրուեցաւ Փրիստոսէ առաջ 332 տարւոյն ըմբամարտ խաղացողաց յաղթականին յԱթէնս: Նոյն անօթոյն քով կար գարձեալ մարդու մը ոսկորոտիքը որ կը կարծուի թէ Աթենացի յաղթականին ոսկորոտիքն ըլլայ:

Այս անօթը պարզ հողէ սափոր մ'է նկարներով զարդարուած, որուն մէկ երեսին վրայ կայ Պալլաս աստուածուհին երկու սեանց մէջ կեցած, սլաք արձըկելու զրից՝ մէջ: Խոկ միւս երեսին վրայ կը տեսնուի ըմբամարտաց խումբ մը, պատանի մը որ կը դիտէ կոիւը, միջնորդ իրաւընտիր մը, և ծերունի մը ձեռքը գաւաղան բոնելով: Վերը գրուած է 332 ամին Աթէնքի իշխանին անունը և այս խօսքս. Վարձ Աքենայ:

